

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2016  
ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 8-րդ մասի դրույթներով՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն NN 1-5 հավելվածների:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ օրենքով սահմանված կարգով ապահովել սույն որոշման հրապարակումը:

**Ռ. ՄԱՆՈՅԱՆ**

**Ռ. ԱՄԱՏՐՅԱՆ**

**Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**Ա. ԲԱԼԱԲԵԿՅԱՆ**

**Լ. ՋԻԼԱԿՅԱՆ**

Կատարող՝ **Հ. Աբիսողոմյան**

**<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ**

Որոշման ընդունումը պայմանավորված է<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 8-րդ մասի դրույթների պահանջների կատարման անհրաժեշտությամբ:

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Որոշման ընդունմամբ Գյումրի համայնքի 2017 թվականի բյուջեում էական փոփոխություններ ավելացումներ կամ նվազեցումներ, չեն նախատեսվում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**Գյումրի համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հաստատման և Գյումրի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 12-ի N 218-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծերի վերաբերյալ**

Գյումրի համայնքի ավագանու ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը՝ մասնակցությամբ անդամներ Լուսինե Սանոյանի, Կարեն Միքայելյանի, Արմեն Տոնոյանի, Կարինե Թաթարյանի, 2017 թվականի փետրվարի 25-28-ը ներառյալ, կազմակերպեց և իրականացրեց ուսումնասիրություններ՝ Գյումրի համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հաստատման և Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի բյուջեում կատարվելիք փոփոխությունների և լրացումների մասին նախագծերի վերաբերյալ:

**Ուսումնասիրման նպատակը՝** պարզել վերը նշված նախագծերի համապատասխանությունը տվյալ ոլորտում գործող պարտադիր կիրառման ենթակա, օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերին, խորհրդատվական բնույթի նշանակություն ունեցող մեթոդական ցուցումների պահանջներին, ինչպես նաև Գյումրի համայնքի զարգացման 2017-2021 թթ. հնգամյա ծրագրի առաջին տարում նախատեսված ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ցուցանիշներին:

**Եզրակացություն՝** «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հաստատելու մասին» և «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 12-ի N 218-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» նախագծերը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության պահանջներին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հանձնաժողովը «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հաստատելու մասին» և «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 12-ի N 218-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» նախագիծերը դրական եզրակացությամբ ներկայացնում է Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 10-ին կայանալիք հերթական նիստի քննարկմանը:

\_\_\_\_\_ **Լուսինե Սանոյան-հանձնաժողովի նախագահ**

\_\_\_\_\_ **Կարեն Միքայելյան- հանձնաժողովի անդամ**

\_\_\_\_\_ **Արմեն Տոնոյան - հանձնաժողովի անդամ**

\_\_\_\_\_ **Կարինե Թաթարյան- հանձնաժողովի անդամ**